ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Քանդակագործ Վիկտար Կոպաչից որպես նվիրատվություն ընդունել «Ջուր» մարմարե քանդակը:

2. Տալ համաձայնություն քանդակագործ Վիկտար Կոպաչի «Ջուր» մարմարե քանդակը Երևանի Անգլիական այգում տեղադրելուն՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱՐԵՎԻԿ ԲԼԵՋՅԱՆՑ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականին Փարաքար համայնքում անցկացվեց Արա Հարությունյանի անվան «PAX ARMENICA» (Հայաստանի խաղաղություն) քանդակագործության միջազգային փառատոնը: Այս նախաձեռնությունը կարևոր մշակութային իրադարձություն էր, որի նպատակն էր խթանել միջազգային համագործակցությունը ժամանակակից քանդակագործության ոլորտում և ամրապնդել Հայաստանի կապերը արտասահմանյան արվեստի կենտրոնների հետ:

Փառատոնի շրջանակներում Կարարայի քաղաքապետարանը Հայաստանին նվիրեց 37 տոննա մարմար՝ որպես Երևան-Կարարա քույր քաղաքների երկարամյա բարեկամության և մշակութային համագործակցության խորհրդանշական արտահայտություն: Այս ժեստը նաև ընդգծեց Կարարայի՝ որպես աշխարհի հայտնի մարմարի կենտրոնի, դերը միջազգային արվեստի նախագծերում:

Փառատոնի ընթացքում ստեղծագործական աշխատանքներով հանդես եկան մի շարք միջազգային քանդակագործներ, այդ թվում՝ բելոռուսցի քանդակագործ Վիկտար Կոպաչը: Կոպաչի կերտած «Ջուր» անվանումով մարմարե քանդակը, նախատեսված է նվիրելու Երևան քաղաքին, որը ժամանակակից արվեստի և միջմշակութային երկխոսության խորհրդանիշ և Անգլիական այգում տեղադրելու նպատակով:

Ազգությամբ բելոռուս Վիկտար Կոպաչը ծնվել է 1970 թվականի օգոստոսի 24-ին Բելոռուսի Հանրապետության Գրոդնոյի շրջանում: Քանդակագործի մասնագիտություն ստացել է Բելոռուսի գեղարվեստի ազգային ակադեմիայում՝ հատկապես աչքի ընկնելով մոնումենտալ քանդակների ստեղծման ձեռագրով: Վիկտար Կոպաչը ստեղծագործական ակտիվ գործունեություն է ծավալում 1996 թվականից և վերջին մոտ 3 տասնամյակի ընթացքում նրա բրոնզից, մարմարից, գրանիտից, տրավերտինից պատրաստած մեծածավալ քանդակները իրենց արժանի տեղն են գտել Բելոռուսի, Հարավային Կորեայի, Իսպանիայի, Իսրայելի, Լեհաստանի և մի շարք այլ երկրների հանրային տարածքներում: Կոպաչը բազմաթիվ միջազգային սիմպոզիումների մրցանակակիր է:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱՐԵՎԻԿ ԲԼԵՋՅԱՆՑ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ**